

**Հարց** Հանձնաժողովի կողմից ո՞ր դեպքերում չի լիցենզավորվում և սահմանվում սակագին:

**Պատասխան** Էներգետիկայի բնագավառում սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունների էությունը կազմող գործառույթները սահմանվում են համապատասխան գործունեության լիցենզիաներով: Բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության գործունեությունը չի լիցենզավորվում: Ջերմային էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման գործունեությունները չեն կարգավորվում (չեն լիցենզավորվում և սակագներ չեն սահմանվում), եթե այդ համակարգերի դրվածքային հզորությունը չի գերազանցում 5.8 ՄՎտ: